ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 19-ին, երբ Վարշավայում տեղի էր ունենում Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային երկրորդ կոնֆերանսը, Մայր Տաճարում մատուցվեց մաղթանք խաղաղության գործի հաջողության համար։ Մաղթանքին ներկա էին Էջմիածնից և Երևանից եկած հավատացյալներ։ Մաղթանքին բարեհաճել էր ներկա գտնվել Վեհափառ Հայրապետը։ Հավուր պատշաճի քարոզ խոսեց Գերաշնորհ Սահակ Ծ. Վարդապետը։ Քարոզը լսվեց մեծ ուշադրությամբ և արժանացավ Վեհափառ Հայրապետի գոհունակությանը։

***

Նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 30-րդ տարեդարձի առթիվ, Մայր Տաճարում տեղի ունեցավ մաղթանք։ Մաղթանքի հանդիսադիրն էր Գերաշնորհ Տեր Վահան Արքեպիսկոպոսը, որը և քարոզեց այն վերելքի մասին, որը Հայաստանը նվաճել է 30 տարվա ընթացքում, Սովետական կարգերի շնորհիվ։

***

Նույն օրը, երեկոյան, Ճեմարանի հանդիսասրահում տեղի ունեցավ երեկույթ՝ Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելու 30-րդ տարեդարձի առթիվ։ Հրավիրված էին հյուրեր թե՛ Երևանից և թե՛ Էջմիածնից։ Ելույթներ ունեցան Ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը, դասախոսները, ուսանողները։ Եղան խմբական երգեր և մեներգներ, նվագածություն և պարեր։

Հանդեսը փակվեց Վեհափառ Հայրապետի եզրափակիչ խոսքով և օրհնությամբ։ Հյուրերը հրավիրվեցին թեյասեղանի։

***

Դեկտեմբերի 21-ին Ճեմարանի հանդիսասրահում տեղի ունեցավ Մայր Աթոռի միաբանության, դասախոսների, ուսանողության և աշխատակից-ծառայողների հանդիպումը քաղաքային Սովետի դեպուտատության թեկնածու Զաքարյանի հետ։

Հանդիպման առթիվ ելույթ ունեցան Ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը, Սահակ Ծ. Վարդապետը, Գ. Լսարանի ուսանող Իգնատիոս սարկավագ Մարտիրյանը և ուրիշները։

***

Դեկտեմբերի 24-ին, քաղաքային և շրջանային սովետների դեպուտատներ ընտրելու համար, Սուրբ Պատարագից հետո, ամբողջ միաբանությունը, Ճեմարանի ուսուցչական կազմը, ուսանողները, աշխատակիցներն ու ծառայողները դնացին ընտրական տեղամասը քվեարկության։

Վեհափառ Հայրապետի փոքր ինչ հիվանդության պատճառով, քվեատուփը բերվեց Վեհարան։ Վեհափառի քվեարկությունը տեղի ունեցավ Վեհարանում։

***

Մայր Տաճարի ավագ դասապետ Տեր Նիկողոս ավագ քահանա Բավեյանը Երևանում վիրահատության ենթարկվելով, կատարելապես ապաքինված, ողջ առողջ վերադարձավ Մայր Աթոռ, հուրախություն Մայր Աթոռի միաբանության և հավատացյալ ժողովրդի։